

էլ որոշ չափով սովի է դատապարտուած իւր կեանքում Աստուծոյ արդարութեան բացակայութեամբ և մի միայն Աստուծոյ տաճարները չեն կարող յագեցնել Նրա սովը. նա կը պահանջի համարձակ, բաց, քրիստոնէական և մարտիրոսական ձայնը աստուածային արդարութեան և Աստուծոյ ճշմարտութեան մասին Եւ եթէ այդ ձայնը նա կըսի թէկուզ իւր գործարանի եկեղեցուց գուրսը, նա կըդնայ նրա ետևից, նա կըցնի՝ թէկուզ օտար տաճարները, իրեն սեփական կը դարձնի նրանց և կը դնայ այդպէս գոչող հովութ ետևից, նրան կը յարգի, նրան կը միանայ, նրան կը դարձնի իրեն հովիւ և առաջնորդ

Հարք և եղբարք գոչում է հեղինակը. — մենք երանի ենք տալիս հին Առւաստանին, որ այնքան անձնութաց հովեւներ ունէք. յիշենք նրանց անուններն և գործը և այդ կլինի ներկայ տխուր գէպերն հասկանալու և պարզելու տուաջին քայլք:

Ճշտապահութեան և զգուշութեան վերաբերեալ այնքան ըան կայ մեր կեանքում, այնպէս է զգուեցըել այդ բանը բոլորին, որ եթէ այսուհետև էլ այդպէս շարունակուի, մենք բոլորովին միայնակ կը մ'նանք. հօտի մի մասը կը դիմի աղանդաւորութեան, իսկ միւսը ոօցիալական կուսակցութեւնների: «Ճիռոր գէպերը» Աստուծոյ մեզ ուղղուած ահեղ կոչ են: Դա Քրիստոսի ծայն է. — «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ». (Աւետարանի ընթերցուած յունվարի 9 ին. զարմանալի զուգագիտութիւն և յիշատակ Փիլիպպոս ճգնաւորի):

—Արգեօք նոյն ճշտապահութեան և զգուշութեան արդեւնք չէ և մեր կողմից գրուանի տակ թագցրած ճրագը, որի լոյսը մեր ժողովուրդը շատ քիչ գէպերումն է մեր միջոցով և աջակցութեամբ տեսնում և ունենալով միենոյն վէրքեր և կարիքներ, ինչ որ ոռու գիւղացին, շփոթուած հոգով և վրզովուած ութիշտեղ է գտնում իւր հոգեկան ծարաւն յագեցնելու ազրիւրը:

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Խնչնէս Արարատի ընթերցողներին յայտնի է Քրանտիական Առաջին մինիստր կամըը, որ յայտնի էր կաթոլիկ հոգեորդականութեան հիմնարկութիւնների գէմ մղած կտաղի կռուով, հրաժարական տուեց նախարարութիւնից և նրա տեղն անցաւ Ֆուռնիէն, որը այդ խնդըում հետեւող է հոմքի քաղաքականու-

թեան։ Յայտնի Պետրով քահանան «Русское Слово» թերթի № 23 և 24-ում աշխատում է պարզաբանել պետութեան և եկեղեցու մէջ այգալիսի երեսյթների պատճառը և մի պատմական—հոգեբանական ակնարկ է ձգում այդ երեսյթի վրայ։ Հեղինակը դանում է, որ իսկապէս կուիր մզւում է ոչ թէ եկեղեցու, այլ հոգեորականութեան դէմ, կամ աւելի ուղիղ ասած, հոգեորականութեան կողմից իւր իրաւունքներն ու արտօնութիւններն ի չարը գործ գնելու դէմ։ Անց առաքեալներից յետոյ այդ զեղծումները ոկասն անել ու լիանալ։ Առաքեալներն երբէք իրենց հօտի վրայ տիրանալու և իշխելու ձգտումն ու ոգին չեն ունեցել։ Յայտնի կանոնիկոս ուսուցչապետ Զաղեթսկին ասում է, որ առաքեալներն երբէք հաւատացեալներից դաղտնի չեն գործել, այլ ընդհակառակն, նրանք հաւատացողների առաջ միշտ բաց էին անում իրենց ծրագիրներն ու դիտաւոցութիւնները և իրագործում՝ նրանց հետ խորհրդակցելով և նրանց աջակցութեամբ։ Հետեւալ ժամանակների հոգեորականութիւնը չափական յափշտակուեց եկեղեցու ինքն ըստ ինքեան շատ պարզ և հասկանալի բարոյական իշխանութեան դաղափարով, բայց այդ դաղափարը նու ըմբռնեց խիստ հակառետարանական ձեռվ, հոգեորին խիստ հակառակ և մարմնացրեց արտաքին և բանի կերպով ժողովրդին ստրկացնելու մէջ, նոյն իոկ կայսրներին և թագաւորների ստրացնելու, ոտի տակ տալով հաւատացողների ազատութիւնն ու խիզճը ինկիկիսիսիայի խարոյների վրայ։ Նրբ վերածնութեան և թեփօրմացիայի (բարեփոխութեան) ժամանակ դարերի ընթացքում ճնշուած ու խեղճացրած ազգերը վերջապէս ճանաչեցին իրենց մարդկային իրաւունքները, նրանք զգուանքով ու զայրութիւնով թօթափեցին իրենցից միջնազարեան հոգեորականութեան լուծը և իրենց հոգու խորքում միշտ կատկածանքով էին վերաբերւում հոգեբարականների ցանկութեանց անկեզծութեան և օգտակարութեան։

Հոգեորականութիւնը, որ չէր կարողացել նուաճել աշխարհ միակ պատուարեր և նրան վայել հոգեոր յարդանքի ճանապարհով, իւր առաջին ոնանկութիւնից յետոյ դարձեալ աշխատեց գտնել որ և է արտաքին ոյժեր և միջոցներ, որպէս զի պահպանել կարողանար աշխարհականների վրայ իւր ունեցած տիրապետութեան մնացորդները։ Նա օգնութեան համար դիմեց պետական ոյժի, այսինքն սաստկացրեց իւր՝ հակառետարանական հոգով աշխարհականների վրայ իշխելու տենչանաց մեղքը, որն իրը թէ հարկա-որ էր նրան, բայց հէնց այդ պատ-

ճառով կոչցը եց իւր անգրանկութեան իրաւունքը և վուխեց
այն ուսպէ սպասով հետ:

Նոր քայլը շղթայում էր հէսց եկեղեցուն, արժէրից զրկում
նրան, զրկում ներքին ազատութիւնից, ստորացնում հոգեոր
ուղեցոյց և մաքդէանց տռաջնորդ լինելու նրա բարձր նշանա-
կութիւնը և փաթաթում նրա վզին ծառայական կամ աւելի
ճիշտն առած՝ սատիկանական գերը պետութեան մէջ: Պետու-
թեան համար եկեղեցու այդ ստորագրեալ վիճակը աւելի քան
ցանկալի էր: Այդ հանգամանքը զգալի կերպով մեծացնում էր
նրա ոյժերը, որի պատճառով էլ պետական քաղմաթիւ գործիւ-
ներ՝ ոչնչէ ըստ հաւատալով հանդերձ՝ միշտ պաշտպան և հովա-
նաւոր են եղել կրօնի: Նրանք կրօնի վրայ նայել են սատիկա-
նական տեսակէտից՝ որպէս խիստ օֆանգակ, զոպող և պահպա-
նող ոյժի վրայ: Այն ի՞նչ, եկեղեցին իւր արքայական շատիդն
ունի և նա առանց իւր արժանիքը ստորացնելու, չի կարող
այս կամ այն երկրի այս կամ այն ժամանակի պետական կա-
րեքներով զեկալարուել և նրանց յարմարուել: Նա պէտք է
թափանցի և տեսնի բոլորը, բոլորի համար ցաւի, բոլորը լու-
սաբանի և ոչ մի բանի համար ոչնչում ըստ զիջանի: Եկեղեցին
պարտաւոր է արթնացնել պետական ոյժերը և ուղղել նրանց
Աստուծուն ծառայելու, բայց երբէք և ոչ մի դէպքում չըսպէտք
է ծառայի: Եկեղեցին պետութեան ծառայելու գատապարտելը
նրա զուտ աշխարհական և մարդկային խնդիրներում՝ որըա-
պըդութիւն է, ծանր և մահացու մեղք է նրանց համար, որոնք
այդ անում են: Զանազան ժամանակների կղերականները կար-
ծէք մոռանում էին Փրկչի խօսքերը, «և դռունք դժողվաց զնա
(զեկեղեցի) մի յաղթահարեցնեն. և վախենալով պատահական
փոթորիկներից ու գժուարութիւններից, գիմում էին պետական
արտաքին պաշտպանութեան: Խնդրում էին պետական արտա-
քին պաշտպանութիւն և հովանաւորութիւն եկեղեցու համար
և զբա փոխարէն իրենց կողմից խոստանում էին օգտակար լի-
նել՝ ինչպէս և լինում էին իսկ ոչ թէ աստուածային, յաւի-
տենական և եկեղեցական, այլ զուտ պետական, մարդկային և
ժամանակաւոր շահերին:

Եկեղեցին, կամ աւելի ճիշտն ասած, հոգեորականութիւնը
եկեղեցու զրօշակի տակ, իւր անձնական կաստայական շահերի
համար միջամտում էր կուսակցութեանց, զասակարգերի կա-
տաղի կռիւներին և պահում ոչ թէ արդարների՝ այլ յաճախ
հզօրների և եշխողների կողմը: Քըհստոսի հարսի աստուածային
դէմքը ծածկում էր նոր ստուերով, եկեղեցու անունից գոր-

ծող անձինք այս ու այնուել ու թէ հալածուած ճշմարտութեան, իրաւագուրիկի, երկնքից՝ հալածանքի դէմ պաշտպանութիւն հայցողի էին օդուում, այլ կողմնակից և քաջալիք էին հանդիսանում յաղթանակող ճնշման և բռնութեան:

Հեղինակի կարծիքով պատմական այսպիսի ժանր փորձից են առաջ դալիս հոկայտկան թիւրիմազութիւնները. որոնք ներկայումս կուտակուել են եկեղեցու, նրա նպատակների և գործունէութեան շուրջը: Իրենց բարձր՝ առաքելական շաւղից մոլորուած կղերականների յանցանեքների յիշատակը խոր արժամատներ էին ձգում հասարակութեան մէջ և արձանագրուում նրա կողմից սխալ հասկացած եկեղեցու շուրջը: Հետեւապէս և զարմանալի չէ, որ Գրանսիխայի նման կառավարութիւններն ու ժողովուրդները պատրաստ են եկեղեցին յետադիմութեան, բռնութեան և անիրաւութեան նեցուկ ու պատուար համարել, և պատրաստ են, դէպքը բերած ժամանակ, հաշիւ տեսնել նրա հետ կողմնակալ, զայրացած կերպով, կրկնապատճեկ վրէ ժինզըռութեամբ և տոկոսեօք հատուցանելով: Եւ այս դէպքում եկեղեցու զրութիւնը առաւել վիրաւորական է այն պատճառով, որ նա ի խղճէ չի կարող իրեն հալածուած համարել յանուն Ցեսարուի ճշմարտութեան, այլ պէտք է զգայ, որ արդարացի են նրա դէմ եղած տրտունջներն ու կառկածները՝ նրա թոյլ ներկայացուցիչների միանդամայն պարզ և որոշ յանցանքների համար: Բայց ի՞նչ ելք կայ եկեղեցու սուրբ և անփոփոխելի միասիայի համար այդ անսպասու և վնասակար զրութիւնից: Ելքը շատ պարզ է, միակ, դժուարին, բայց անձնազո՞ն և հերոսական:

Հեղինակը հովիւներին, հոգեոր բժիշկներին խորհուրդ է տալիս բժշկել իսանց, հրաժարուիլ իրենց նեղ դասակարգային նպատակներից ու սովորութիւններից, թօթափել տգիսութեան, ծուլութեան և մեռելութեան փոշին, հասկանալ և իւրացնել մարդկային հիմնական, նույնական և անհանդչելի ծզտումները և զեկավարուելով նրանցով, այնպէս առաջնորդել իրենց բանաւոր հօտին դէպի Աստուծոյ արքայութիւնը, որ իւրաքանչիւր քայլափոխում հետզնատէ հալչին ու անյայտանան բռնութիւն, ամեն տեսակ ստրկութիւն, անօրէնութիւն և անարդարութիւն և նրանց փոխարէն աճի ազատ ծզտումն դէպի Աստուծած և նրա արդարութիւնը, դէպի փոխադարձ եղբայրութիւն և հոգեկան ազատութիւն:

«Սրանից հետևում է այն, որ հոգեորականութիւնը պէտք է ամենայառաջադէմ դասակարգ լինի, որը պէտք է առաջ-

նորդի և ոչ թէ քաշ դայ բոլորի քամակին։ Եւ երբ նա առաջ նորդում է, ոչ թէ իւր ետեկից պէտք է տանի շղթայակաս գերիներին, այլ ազատ, սիրող զաւակների, բարեկամ աշակերտնեցին։ Ահագին դասակարգ, երկրի հազարաւոր և ընտար կեանփի բարձր խորհուրդն ըմբռնող մարդիկ լարում են իրենց բոլոր ոյժերը, որպէս զի կարողանան առաջ տանել ֆողովուրդն ու նրա կեանքը, բարւոքել այն ամենալաւ ձեռվի, մտցնել նրա մէջ ներքին ընդհանուր խաղաղութիւն և բարձրագոյն օրինականութիւն, բանալ երկրի բոլոր հոգեւոր ոյժերը։ Եւ չէ՞ որ դա բոլոր կուսակցութեանց պատկանող մարդկանց ցանկութիւնն է։ Այդ պիսի աշխատանքն ու պաշտօնավարութիւնը բերկրութեամբ կընդունեն թէ հաւատացող և թէ չը հաւատացող մարդիկ»։

Այդ տեսակ գործունեութիւնը սկսելու համար հեղինակը կոմքի սպառնալիքը՝ եկեղեցին պետութիւնից անջատելու մասին երբէք վտանգաւոր չի համարում, այլ նոյն իսկ գտնում է ցանկալի, ի հարկէ այդ անջատումն ընդունելով ոչ թէ չարամիտ, այլ խաղաղ բաժանումն և անկախ՝—ազատ ձեռքեր։ Եկեղեցու համար վախենալու բան չկայ, նրա ոյժը այս կամ այն նախարարի հովանաւորութեան մէջ չի կայանում, որովհետեւ միանդամայն արդարացի են Գամաղեկի խօսքերը առաքեալների մասին։ «թողէք և հեռացէք այդ մարդկանցից, որովհետեւ եթէ գրանց գործը մարդկային է, նա կը քանդուի ու կը ոչնչանայ, իսկ եթէ Աստուածային, գուը նրան յաղթել՝ ոչնչացնել չէք կարող»։

— Բոլորովին այլ կարծիք յայտնեց նոյն խնդրի մասին ու Պիոռ Խ Պապը, ինչպէս անցեալ անդամ առաջ էինք բերել Արարատում և անտեղի կերպով առաջ բերեց Փրկչի խօսքը թէ՝ «Եթէ զիս հալածեցին և զձեզ հալածեցեն» . . . ոչ հոգեորականներին առհասարակ և մանաւանդ կաթոլիկ հոգեորականներին երբէք նրա համար չեն հալածել, ինչու համար որ Փրկչին հալածեցին և Պետրովի կարծիքը խիստ ուղիղ է և արդարացի առհասարակ հոգեորականների վերաբերութեամբ, որոնք իրենց շահեն յայտաբարում են եկեղեցու շահեր և մոլորենելով ժողովրդին, շատ անդամ կուի մղում Աւետարանի հիմնական սկզբունքների դէմ, բայց այդ մասին կ աշխատենք խօսել աւելի ընդարձակօրէն մի ուրիշ անդամ։